

**ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ
ՎԻՃԱԿԻ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Անտոնիո Ֆիչի, Վարդան Ուռուտյան

*Մոլիսեի համալսարան, Հռոմի ԼՈՒՄՍՍ համալսարան, Յուրիքսե (Իտալիա)
ICARE հիմնադրամ (Հայաստան)*

1. Կոոպերատիվների մասին ՀՀ օրենքի աղբյուրները

Հայաստանում կոոպերատիվների մասին օրենսդրությունը բաղկացած է տարբեր իրավական փաստաթղթերում գետեղված դրույթներից: Այդ օրենսդրությունը հստակ կերպով կրում է խորհրդային ժամանակների կնիքը, ինչպես նաև իր հիմնական առանձնահատկություններով (ներառյալ, մասնավորապես, հիմնական թերություններն ու երկիմաստությունները) նման է կոոպերատիվների մասին Ռուսաստանի ներկայիս օրենսդրությանը:

Կոոպերատիվների մասին հայաստանյան օրենսդրությունը գնահատելու համար ճիշտ կլինի կոոպերատիվների մասին համապատասխան դրույթները բաժանել չորս խմբի, այն է՝

ա) Կոոպերատիվների գործունեության ընդհանուր կարգավորումը Քաղաքացիական օրենսգրքում

1998թ. հուլիսի 28-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ «ՔՕ») նախատեսում է մի շարք կանոններ, որոնք ներկայումս կարելի է համարել ընդհանուր առմամբ երկրում կոոպերատիվների գործունեությունը կարգավորող դրույթներ:

Որպես ընդհանուր կարգավորում, ՔՕ-ն նախատեսում է կոոպերատիվների մասին միայն հիմնարար կանոններ, այդ թվում՝ կոոպերատիվների սահմանումը և դասակարգումը՝ կոոպերատիվի կոնկրետ տեսակների կամ կոոպերատիվների ընդհանուր կարգավորման առանցքային ասպեկտների մանրակրկիտ կարգավորումը թողնելով այլ օրենքների կարգավորմանը:

ՔՕ դրույթներն առհասարակ ծառայում են որպես ուղեցույց օրենսդրական այլ փաստաթղթերի համար, այսինքն՝ որպես ընդհանրական սկզբունք, որոնք կարող են ավելի մանրամասնորեն մշակվել այլ օրենքներով՝ առանց հակասելու ՔՕ-ին¹: Մասնավորապես, օրենքը ՔՕ դրույթների և այլ օրենքների դրույթների հետևյալ հարաբերակցությունն է նախատեսում. «այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին» (ՔՕ Հոդ. 1, կետ 1):

ՔՕ-ում կոոպերատիվներն առաջին անգամ հիշատակվում են **հոդված 50-ի 2-րդ կետում և 51-ի 3-րդ կետում**:

Հոդված 50-ը ՔՕ 5-րդ գլխի առաջին դրույթն է, որը նվիրված է «իրավաբանական անձանց»: Այն նախ տալիս է իրավաբանական անձի սահմանումը², իսկ այնուհետև

¹ Stu` De Luca, *Russia*, in Cracogna-Fici-Henr' (eds.), *International Handbook of Cooperative Law*, Springer, Berlin-Heidelberg (2013), p. 676.

² Համաձայն ՔՕ հոդ. 50, կետ 1-ի, «Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ»:

իրավաբանական անձանց բաժանում է երկու կատեգորիայի՝ «իրավաբանական անձի գույքի կազմավորմանը մասնակցելու կապակցությամբ», այն է՝ i) «իրավաբանական անձ, որի նկատմամբ նրանց հիմնադիրները (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ» և ii) «իրավաբանական անձ, որի նկատմամբ նրանց հիմնադիրները (մասնակիցները) չունեն պարտավորական իրավունքներ»։ Կոոպերատիվները, տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների հետ միասին, պատկանում են առաջին խմբին, իսկ երկրորդ խմբին պատկանում են հասարակական միավորումները, հիմնադրամները, և իրավաբանական անձանց միությունները։

Հետևաբար, կոոպերատիվներն իրավաբանական անձինքն են, որոնց նկատմամբ հիմնադիրները (կամ մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ (սա պետք է նշանակի, որ նրանք իրավունքներ ունեն իրավաբանական անձի գույքի/միջոցների նկատմամբ)։ Այս առումով, դրանք համանման են այլ բիզնես կառույցներին, այն է՝ տնտեսական ընկերակցություններին և ընկերություններին և տարբերվում են հասարակական միավորումներից, հիմնադրամներից և իրավաբանական անձանց միություններից։

ՔՕ հոդված 51-ը նախատեսում է իրավաբանական անձանց երկու տարբեր ընդհանուր տեսակ՝ առևտրային և ոչ առևտրային։ Կոոպերատիվները կարող են լինել կամ առևտրային կամ էլ ոչ առևտրային իրավաբանական անձինք՝ «կախված գործունեության բնույթից» (հոդ. 51, կետ 3)։

Սույն զեկույցի հաջորդ բաժնում կհետազոտենք այս տարբերակումը, որը խիստ կարևոր է կոոպերատիվների և դրանց իրավական ռեժիմի համար։

Կոոպերատիվների կոնկրետ և հիմնական կարգավորումը տրված է **ՔՕ-ի հոդված 117-121-ում**։

Ընթերցողի հարմարության համար այս կարգավորումը կազմող դրույթները վերարտադրված են ստորև բերված աղյուսակում։ Դրանք քննության կառնենք մեկնաբանությունների հաջորդ բաժիններում։

Աղյուսակ 1. Կոոպերատիվների կարգավորումը ՔՕ-ում

Հոդված 117. Հիմնական դրույթներ կոոպերատիվների մասին

1. Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների եւ իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական եւ այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը։
2. Կոոպերատիվի կանոնադրությունը, բացի սույն օրենսգրքի 55 հոդվածի 2-րդ կետում նշված տեղեկություններից, պետք է պայմաններ պարունակի կոոպերատիվի անդամների փայավճարների չափի, դրանք վճարելու կարգի եւ այդ պարտավորությունը խախտելու համար կոոպերատիվի անդամների պատասխանատվության, կոոպերատիվի կառավարման մարմինների կազմի, իրավասության ու նրանց որոշումների ընդունման՝ ներառյալ այն հարցերով, որոնցով որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ, կոոպերատիվի անդամների կողմից կոոպերատիվի կրած վնասները հատուցելու կարգի մասին։
3. Կոոպերատիվի անվանումը պետք է ցուցում պարունակի նրա գործունեության հիմնական նպատակի մասին, ինչպես նաեւ ներառի "կոոպերատիվ" բառը։
4. Կոոպերատիվների առանձին տեսակների, մասնավորապես՝ սպառողական կոոպերատիվների ու համատիրությունների առանձնահատկությունները եւ իրավական վիճակը, ինչպես նաեւ նրանց անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով։

Հոդված 118. Կոոպերատիվի գույքը

1. Կոոպերատիվի սեփականության ներքո գտնվող գույքը, կոոպերատիվի կանոնադրությամբ համապատասխան, բաժանվում է նրա անդամների փայերի։
2. Կոոպերատիվի անդամը պարտավոր է մինչեւ կոոպերատիվի գրանցումն ամբողջությամբ մուծել փայավճարը, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ։

3. Կոոպերատիվի կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ կոոպերատիվին պատկանող գույքի որոշակի մասը կանոնադրությամբ սահմանված նպատակներով օգտագործվող անբաժանելի ֆոնդ է: Անբաժանելի ֆոնդերն օգտագործելու մասին որոշումը կոոպերատիվի անդամներն ընդունում են միաձայն, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ:

4. Կոոպերատիվի անդամները պարտավոր են տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, լրացուցիչ վճարների միջոցով փակել առաջացած վնասները: Այս պարտականությունը չկատարելու դեպքում կոոպերատիվը, պարտատերերի պահանջով, կարող է լուծարվել դատական կարգով: Կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպերատիվի յուրաքանչյուր անդամի լրացուցիչ վճարի չնուծված մասի սահմաններում:

5. Կոոպերատիվի լուծարումից հետո մնացած գույքը բաշխվում է նրա անդամների միջև՝ կոոպերատիվի կանոնադրությանը համապատասխան:

Հոդված 119. Կոոպերատիվի կառավարումը

1. Կոոպերատիվի կառավարման բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է:

Հիսունից ավելի անդամ ունեցող կոոպերատիվում կարող է ստեղծվել դիտորդ խորհուրդ, որը վերահսկողություն է իրականացնում կոոպերատիվի գործադիր մարմինների գործունեության նկատմամբ: Դիտորդ խորհրդի անդամներն իրավունք չունեն գործել կոոպերատիվի անունից: Կոոպերատիվի գործադիր մարմիններն են նրա վարչությունը եւ (կամ) նախագահը: Նրանք ղեկավարում են կոոպերատիվի ընթացիկ գործունեությունը եւ հաշվետու են դիտորդ խորհրդին ու կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովին:

Դիտորդ խորհրդի եւ վարչության անդամներ, ինչպես նաեւ կոոպերատիվի նախագահ կարող են լինել միայն կոոպերատիվի անդամները: Դիտորդ խորհրդի կամ գործադիր մարմնի անդամը չի կարող լինել համանման այլ կոոպերատիվի անդամ:

Կոոպերատիվի անդամը չի կարող միաժամանակ լինել դիտորդ խորհրդի եւ վարչության անդամ կամ կոոպերատիվի նախագահ:

2. Կոոպերատիվի կառավարման մարմինների իրավասությունը եւ նրանց որոշումների ընդունման կարգը սահմանվում են օրենքով ու կոոպերատիվի կանոնադրությամբ:

3. Կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1) կոոպերատիվի կանոնադրությունը փոփոխելը.

2) դիտորդ խորհուրդ կազմավորելը եւ նրա անդամների լիազորությունները դադարեցնելը, ինչպես նաեւ կոոպերատիվի գործադիր մարմիններ կազմավորելն ու նրանց լիազորությունները դադարեցնելը, եթե կոոպերատիվի կանոնադրությամբ այդ իրավունքը չի տրվել դիտորդ խորհրդին.

3) կոոպերատիվի անդամներ ընդունելը եւ հեռացնելը.

4) կոոպերատիվի տարեկան հաշվետվությունները եւ հաշվապահական հաշվեկշիռները հաստատելն ու վնասները բաշխելը.

5) կոոպերատիվի վերակազմակերպման եւ լուծարման մասին որոշում ընդունելը:

Կոոպերատիվների մասին օրենքներով եւ կոոպերատիվի կանոնադրությամբ կոոպերատիվի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը կարող է վերապահվել նաեւ այլ հարցերի լուծում:

Կոոպերատիվի ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրանց կողմից փոխանցվել կոոպերատիվի գործադիր մարմինների իրավասությանը:

4. Ընդհանուր ժողովում որոշումներ ընդունելիս կոոպերատիվի անդամն ունի մեկ ձայնի իրավունք:

Հոդված 120. Կոոպերատիվի անդամության դադարումը եւ փայի անցումը

1. Կոոպերատիվի անդամն իրավունք ունի դուրս գալ կոոպերատիվից: Այդ դեպքում նրան պետք է վճարվի նրա փայի արժեքը կամ տրվի դրան համապատասխան գույք, ինչպես նաեւ կատարվեն կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ վճարներ:

Կոոպերատիվից դուրս եկող անդամին փայի արժեքը վճարվում կամ այլ գույքը տրվում է ֆինանսական տարին ավարտվելուց եւ կոոպերատիվի հաշվապահական հաշվեկշիռը հաստատվելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ:

2. Կոոպերատիվի անդամը, կոոպերատիվի կանոնադրությամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում, ինչպես նաեւ օրենքով եւ կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում, կարող է ընդհանուր ժողովի որոշմամբ հեռացվել կոոպերատիվից:

Կոոպերատիվից հեռացված անդամը, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, ունի փայ եւ կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված այլ վճարներ ստանալու իրավունք:

3. Կոոպերատիվի անդամն իրավունք ունի իր փայը կամ դրա մասը հանձնել կոոպերատիվի այլ անդամի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով եւ կոոպերատիվի կանոնադրությամբ:

Փայը (դրա մասը) կոոպերատիվի անդամ չհամարվող քաղաքացուն հանձնել թույլատրվում է միայն կոոպերատիվի համաձայնությամբ: Այդ դեպքում կոոպերատիվի մյուս անդամներն օգտվում են նման փայը

(դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից: Եթե կոոպերատիվի անդամները կոոպերատիվի կանոնադրությամբ նախատեսված ժամկետում չեն օգտվել այդ իրավունքից, փայը կարող է օտարվել երրորդ անձի:

4. Կոոպերատիվի անդամի մահվան դեպքում նրա ժառանգները կարող են դառնալ կոոպերատիվի անդամ, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ: Հակառակ դեպքում՝ կոոպերատիվը ժառանգներին վճարում է կոոպերատիվի մահացած անդամի փայի արժեքը:

5. Կոոպերատիվի անդամի անձնական պարտքերի համար նրա փայի վրա բռնագանձում տարածել թույլատրվում է միայն այդ պարտքերը մարելու համար նրա այլ գույքի անբավարարության դեպքում: Կոոպերատիվի անդամի պարտքերով չի կարող բռնագանձում տարածվել կոոպերատիվի անբաժանելի ֆոնդերի վրա:

Հոդված 121. Կոոպերատիվների վերակազմակերպումը եւ լուծարումը

Կոոպերատիվն իր անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Կոոպերատիվի վերակազմակերպման եւ լուծարման այլ հիմքերն ու կարգը սահմանվում են սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով:

Վերջապես, մնում է հիշատակել ԲՕ այլ դրույթներ, որոնք վերաբերում են կոնկրետ կոոպերատիվներին, այն է՝ **հոդ. 30, կետ 2** (կոոպերատիվի անդամ դառնալու համար նախատեսված նվազագույն տարիքը), **հոդ. 172, կետ 6** (բնակարանային կամ համանման այլ կոոպերատիվում անհատական գույքի ձեռք բերման մասին), **հոդ. 1248** (կոոպերատիվում մասնակցի բաժնեմասի արժեքի նկատմամբ իրավունքը ժառանգելու մասին):

ա) Սպառողական կոոպերատիվների հատուկ կանոնակարգումը 1993թ. օրենքում

Գոյություն ունի 1993թ. **հատուկ օրենք սպառողական կոոպերատիվների մասին**³, որը բաղկացած է ընդամենը հինգ հոդվածից և սպառողական կոոպերատիվները որակում է բացառապես որպես «շահույթ չհետապնդող» կազմակերպություններ (նույնը՝ ինչ ոչ առևտրային իրավաբանական անձինք) և կարգավորում է սպառողական կոոպերատիվների միությունները: Սա նշանակում է, որ, սպառողական կոոպերատիվները որպես ոչ առևտրային կազմակերպություն որակելուց (և նվազագույնը 5 անդամ ունենալու պահանջից) բացի, փաստորեն, **սպառողական կոոպերատիվի կոնկրետ ռեժիմ գոյություն չունի**: Սակայն սպառողական կոոպերատիվները շարունակում են մնալ ԲՕ՝ կոոպերատիվների վերաբերյալ ընդհանուր դրույթների կարգավորման առարկա:

Աղյուսակ 2. Սպառողական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքը

Սույն օրենքը սահմանում է սպառողական կոոպերացիայի կազմակերպական-իրավական հիմունքները, սպառողական կոոպերացիայի ձևավորման (ստեղծման) գործունեության կարգն ու պայմանները, ինչպես նաև պետական մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների սկզբունքները:

Հոդված 1. Սպառողական կոոպերատիվը

1. Հայաստանի Հանրապետությունում սպառողական կոոպերատիվը 5-ից ոչ պակաս անդամների (մասնակիցների) կարիքներն ապրանքներով և ծառայություններով բավարարելու, նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով կամավոր հիմունքներով ձևավորված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է:

2. Սպառողական կոոպերատիվի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով և իրավական այլ ակտերով:

³«Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը, ընդունված 2012թ. սեպտեմբերին:

3. Սպառողական կոոպերատիվը, իր նպատակներից ելնելով, կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործունեություն:

Հոդված 2. Սպառողական կոոպերատիվի մասնակիցները

1. Սպառողական կոոպերատիվի մասնակիցներ (անդամներ) կարող են լինել քաղաքացիները և (կամ) համատեղ գործունեության պայմանագիր կնքած անհատ ձեռնարկատերերն ու գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները:

Հոդված 3. Սպառողական կոոպերատիվների միությունը

1. Սպառողական կոոպերատիվների միությունը (այսուհետ՝ միություն) իրավաբանական անձանց գույքային և (կամ) այլ մասնակցությամբ կազմավորված սպառողական կոոպերացիա է: Միությունն իրավաբանական անձ է, որի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով իրավաբանական անձանց միությունների համար սահմանված դրույթներով՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկություններով:

2. Միության մասնակիցն իրավունք ունի դուրս գալու միության կազմից՝ միության կանոնադրությամբ սահմանված կարգով դրամական կամ նյութական այլ արտահայտությամբ ստանալով միությանը պատկանող գույքի իր բաժինը:

3. Միության կառավարման բարձրագույն մարմինն իր մասնակիցների ներկայացուցիչների ընդհանուր ժողովն է, որը որոշում է միության անդամների փայավճարի չափը (եթե միությանը մասնակցելը պայմանավորված է փայավճարով), ընտրում է միության ղեկավար և վերահսկիչ մարմիններ, լսում նրանց հաշվետվությունները, սահմանում այդ մարմինների պահպանման ծախսերը, որոշում դուրսընկնող միություններ հիմնադրելու, վերակազմակերպելու, լուծարելու հարցերը, ինչպես նաև սույն օրենքով և միության կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում լուծում է այլ հարցեր:

4. Ներկայացուցիչների ընդհանուր ժողովում միության մասնակիցները, անկախ փայավճարի չափից, առաջադրում են հավասար թվով ներկայացուցիչներ:

5. Ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է միության կազմի մեջ մտած բոլոր մասնակիցների ներկայացուցիչների 50 տոկոսից ավելին:

6. Միության գործունեությունը դադարում է ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշմամբ՝ գաղտնի քվեարկությամբ, եթե դրա օգտին քվեարկել է միության կազմի մեջ մտած բոլոր մասնակիցների ներկայացուցիչների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երկու երրորդը:

7. Միության գործադիր մարմինը վարչությունն է, իսկ վերահսկիչ մարմինը՝ վերստուգիչ հանձնաժողովը: Միությունը վարչության և վերստուգիչ հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է միության կանոնադրությամբ:

8. Միության գործունեության դադարման դեպքում հարկերը վճարելուց, պարտադիր մյուս վճարումներն իրականացնելուց, պարտատերերի հանդեպ պարտավորությունները կատարելուց հետո մնացած գույքի բաշխման կամ հետագա օգտագործման կարգը որոշվում է միության կանոնադրությամբ:

Հոդված 4. Սպառողական կոոպերատիվների և կոոպերատիվների միության ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է սպառողական կոոպերատիվի և դրանց միությունների իրավունքները և պաշտպանում նրանց օրինական շահերը: Պետությունն աջակցում է սպառողական կոոպերատիվների զարգացմանը և տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանը:

2. Սպառողական կոոպերատիվն իր գործունեության մեջ անկախ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպություններից:

3. Արգելվում է սպառողական կոոպերատիվի գործունեությանը պետական կառավարման և տեղական

ինքնակառավարման մարմինների միջամտությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

4. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների անօրինական միջամտության հետևանքով սպառողական կոոպերատիվին հասցված նյութական վնասը ենթակա է փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները սպառողական կոոպերատիվի պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում իսկ վերջիններս պատասխանատվություն չեն կրում այդ մարմինների պարտավորությունների համար:

Հոդված 5. Սպառողական կոոպերատիվի պետական գրանցումը

1. Սպառողական կոոպերատիվը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պետական գրանցման օրվանից:

զ) Այլ օրենքների համապատասխան դրույթներ

- Բաժնետիրական ընկերությունների մասին 2001թ. օրենքի հոդ. 23, կետ 2, որի համաձայն «ընկերությունը կարող է վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ առևտրային կոոպերատիվի»:

- Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին 2001թ. ապրիլի 3-ի օրենքի հոդ. 20, կետ 4, որի համաձայն «Կոոպերատիվների պետական գրանցման դեպքում բաժնային ֆոնդի (սույն հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետ) հետ գրառվում է անբաժանելի ֆոնդի չափը»:

դ) Կոոպերատիվների տիպի կազմակերպությունների մասին այլ օրենքներ

- Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին 2002թ. ապրիլի 30-ի օրենքի հոդ. 3, կետ 2, որի համաձայն, «Ակումբը կարող է ստեղծվել ոչ առևտրային կոոպերատիվի կամ իրավաբանական անձանց միության կազմակերպչաիրավական ձևով»:

- Ջրօգտագործողների և ջրօգտագործողների միությունների մասին 2002թ. հուլիսի 1-ի ՀՀ օրենքը:

- Համատիրության մասին ՀՀ օրենքը:

2. Կոոպերատիվները առևտրային և ոչ առևտրային իրավաբանական անձանց համատեքստում

ՔՕ հոդ. 51-ի կետ 3-ի համաձայն, «Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ»։ Այստեղից էլ գալիս է հիմնական տարբերակումը՝

յ) առևտրային կոոպերատիվների (որոնց թվում արտադրական կոոպերատիվները),

ի) ոչ առևտրային կոոպերատիվներ (որոնց թվին են դասվում սպառողական կոոպերատիվները՝ համաձայն 1993թ.-ի օրենքի և համատիրությունները):

Հայաստանի օրենսդրությունը հիմնարար տարբերակում է մտցնում առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջև, սակայն հայեցակարգային էական

խառնաշփոթություն է պարունակում՝ կապված այս կետի հետ, գոնե՝ օտարերկրացի դիտորդի տեսանկյունից:

Համաձայն պաշտոնական թարգմանության, առևտրային իրավաբանական անձի որակը կախված է իր գործունեությունից շահույթ հետապնդելուց, իսկ ոչ առևտրային իրավաբանական անձի որակը՝ թե՛ շահույթ չհետապնդելուց և թե՛ շահույթը չբաշխելու հանգամանքից: Հետևաբար, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները միմյանցից տարբերակող հանգամանքը պետք է լինի ոչ միայն անդամներին շահույթը բաշխելու վերջնական նպատակը, այլև, և առավել արմատականորեն՝ իրականացվող գործունեությունից առհասարակ շահույթ ստանալու (օգուտ քաղելու) նպատակը:

Հետևաբար, արդյունքը պետք է լինի այն, որ ոչ առևտրային կազմակերպություններին արգելվի շահութաբեր գործունեություն իրականացնել, հատկապես ունենալ տնտեսական ձեռնարկություն (տես ԶՕ հոդ. 2-ը), բայց փաստորեն հոդ. 51-ի 4-րդ կետը չի բացառում այդպիսի գործունեությունը, այլ միայն սահմանափակում է այդ հնարավորությունը՝ սահմանելով, որ «Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար դրանք ստեղծվել են, և համապատասխանում է այդ նպատակներին»: Այս սահմանափակումը, կարծես թե չի ենթադրում որևիցե քանակական սահմանափակում (օր.՝ պահանջ դրվի, որ տվյալ ձեռնարկությունը պետք է լինի մարզինալ և այլն):

Պետք է մնա այն դրույթը, որ համաձայն այս հոդվածի առաջին կետի, ոչ առևտրային կազմակերպության կողմից շահագործվող ձեռնարկությունը առհասարակ չպետք է շահույթ ստանա (եկամուտները հավասար են ծախսերին) կամ գոնե պետք է ստանան միայն անբաժանելի շահույթ (որի դեպքում ոչ առևտրայինը հավասարվում է շահույթ չհետապնդողին՝ բառի բուն իմաստով): Վերջին մեկնաբանությունն ավելի համատեղելի է ԶՕ հոդ. 2-ով նախատեսված՝ ձեռնարկության սահմանման հետ:

Որպես եզրակացություն, թվում է, որ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջև եղած այլընտրանքը հավասարաբեթ է շահույթ հետապնդող և շահույթ չհետապնդող կազմակերպությունների միջև եղածին, այսինքն՝ ավելի շատ մոտ է շահույթի բաշխմանը (շահույթի չբաշխման արգելք՝ Հանսսմանի առաջադրած իմաստով), քան թե՛ իրականացվող գործունեության բնույթին (առևտրային կամ նվիրատվական)⁴:

Աղյուսակ 3. Առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները ԶՕ-ում

ՀՀ ԶՕ-ի հոդված 51

1. Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող եւ ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:
2. Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների եւ ընկերությունների ձեռով:
3. Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ մնան նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ:
4. Ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ ձեռերով:
Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք ստեղծվել են, եւ համապատասխանում է այդ նպատակներին: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Նշենք, որ «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի

⁴ Նույն իմաստով մաս Ռուսաստանի դաշնության կազմակերպությունների մասին օրենքում, Դե Լուկա, 2013:

2.1. Այս տարբերակումը հաղթահարելու հայեցակարգային շրջանակը

Առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվների տարբերակումը անցյալից մնացած ժառանգություն է (գալիս է կենտրոնական պլանավորմամբ աշխատող սոցիալիստական տնտեսությունից), որն անհիմաստ է ազատ շուկայական տնտեսության պայմաններում։ Անկախ այն հանգամանքից, թե կոոպերատիվներն իրենց գործունեությունն իրականացնում են՝ օգտագործելով իրենց անդամների վարձու աշխատանքը, թե վերջիններիս տրամադրած արտադրանքը (արտադրական կամ աշխատավորական կոոպերատիվ), թե իրենք են իրենց անդամներին տրամադրում ապրանքներ և ծառայություններ (սպառողական կոոպերատիվներ), կոոպերատիվները երկու դեպքում էլ կազմակերպություններ են, որոնք ձեռնարկ են վարում իրենց անդամների հետ և ի շահ անդամների (ծառայությունների ստանձնում՝ ի հակադրություն շահույթի ստանձնման), ընդ որում միակ տարբերությունն այն է, որ առաջին դեպքում անդամները կոոպերատիվ ձեռնարկության մատակարարներն են, իսկ երկրորդ դեպքում՝ սպառողները։

Կոոպերատիվի իրականացրած գործունեությունը, ամեն դեպքում, ձեռնարկատիրական բնույթ ունի, որովհետև բիզնես գործարքները տեղի են ունենում կոոպերատիվի և դրա անդամների միջև, գործարքներ, որոնք սպահովում են կոոպերատիվի գոյությունը և երկարաժամկետ գոյատևումը։ Այս գործարքներն առանձնահատուկ են և տարբերվում են երրորդ կողմերի հետ շուկայում իրականացվող սովորական գործարքներից (ըստ այդմ, այդ գործարքներից գոյացող շահույթը պետք է ունենա առանձնահատուկ իրավական կարգավիճակ, այն է՝ կոոպերատիվ ավելցուկ, և դրանով իսկ տարբերվի ոչ անդամների հետ իրականացվող գործարքներից գոյացող շահույթից, եթե կան այդպիսիք, այն է՝ կոոպերատիվ շահույթից), թեպետ, այսուհանդերձ, շարունակում են մնալ բիզնես գործարքներ (և ոչ թե անհատույց մատակարարումներ, նվերներ և այլն)։ Սա հավասարապես վերաբերում է թե այն դեպքին, երբ կոոպերատիվը ձեռք է բերում աշխատանք կամ այլ արտադրանք իր անդամներից և թե այն դեպքին, երբ կոոպերատիվը ապրանքներ կամ ծառայություններ է վաճառում իր անդամներին։ Նույնիսկ երբ սպառողական կոոպերատիվներն իրենց անդամներին տրամադրում են սոցիալական կամ համայնքային կամ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ծառայություններ, իրենք պարտավոր են դա անել ձեռնարկատիրական ձևով։ Այսպիսով, կոոպերատիվները տարբերվում են մաքուր ոչ առևտրային կազմակերպություններից։

Չնայած վերոնշյալին (այսինքն՝ կոոպերատիվներին չի կարելի համարել ոչ առևտրային կազմակերպություններ), կոոպերատիվները պետք է նաև տարբերվեն շահույթ հետապնդող կազմակերպություններից։ Վերջինները ձեռնարկատիրական գործունեություն են վարում՝ շահույթ ստանալու նպատակով, որը նախատեսված է իրենց բաժնետերերի միջև բաշխման համար՝ ըստ ունեցած/ներդրած կապիտալի համամասնության։ Իսկ առաջինները ձեռնարկություն են աշխատեցնում՝ ուղղակիորեն իրենց անդամների՝ որպես կոոպերատիվ ձեռնարկության սպառողների, մատակարարողների կամ աշխատողների, շահերը բավարարելու նպատակով, ընդ որում, եթե առաջանում է ավելցուկ, սպա այն բաշխվում է անդամներին՝ ելնելով կոոպերատիվ ձեռնարկության մեջ ունեցած անհատական մասնակցությունից՝ սպառման, մատակարարման կամ աշխատանքի տեսքով և ոչ թե՝ կապիտալի ձևավորման մեջ ունեցած ներդրումից։ Ձեռնարկություն (և առևտրային կազմակերպություն) հասկացությունը ոչ թե պարտադրում է շահույթ ստեղծել (և շահույթ ստեղծելու խնդիր դնել, որքան էլ նման խնդիրը նորմալ/սովորական կարող է լինել), այլ՝ սպահովել տվյալ գործունեության տնտեսական հարակալունությունը՝ շնորհիվ հաճախորդների կատարած վճարումների (սպառողական կոոպերատիվի պարագայում հաճախորդները հենց կոոպերատիվի անդամներն են)։

Ուստի, **կոոպերատիվները օրենքով պետք է միշտ ճանաչվեն որպես առևտրային իրավաբանական անձինք** (ինչպես Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի հոդ. 2-ի 1-ին մասով սահմանվում են ընկերությունները), այսինքն՝ որպես կազմակերպություններ, որոնք ձեռնարկություն են աշխատեցնում իրենց անդամներին օգուտներ ապահովելու համար, նույնիսկ՝ երբ դրանք սպառողական կոոպերատիվներ են: Սակայն, անդամների օգուտ հասկացության մեջ մտնում է ոչ թե ներդրված կապիտալի դիմաց նրանց շահաբաժիններով վարձատրելը և/կամ ձեռնարկության գործունեությունից ստացված շահույթի արժևորումը, այլ՝ ձեռնարկատիրական գործունեության միջոցով ֆինանսական կամ այլ կարիքների (ուղղակիորեն) լավագույնս (հնարավոր) բավարարումը:

Սպառողական կոոպերատիվը կազմակերպվում է՝ իր անդամ/սեփականատերերին ապրանքներ և ծառայություններ (օր.՝ սննդամթերք, բանկային կամ ֆինանսական պրոդուկտներ, բնակարան և այլն) վաճառելու, **արտադրական կոոպերատիվը՝** իր անդամներից ապրանքներ և ծառայություններ (օր.՝ խաղող, կաթ և այլն) գնելու, իսկ **աշխատավորական կոոպերատիվը՝** իր անդամներին վարձու աշխատանքով ապահովելու նպատակով:

Աղյուսակ 1. Շահույթ հետապնդող կազմակերպություններ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ և կոոպերատիվներ

Շահույթ հետապնդողներ	Շահույթ չհետապնդողներ	Կոոպերատիվներ
Վարում են ձեռնարկություն (առևտրային գործունեություն)՝ ի շահ իրենց բաժնետերերի (կապիտալ ներդրողների). <u>շահույթի նպատակ</u>	Կամ ձեռնարկություն են վարում կամ նվիրատվություններ անում ընդհանուր/հանրային/կոլեկտիվ/համայնքային շահի համար <u>ընդհանուր հետաքրքրության նպատակ</u>	Վարում են ձեռնարկություն՝ (անմիջականորեն) իրենց անդամների, որպես կոոպերատիվ ձեռնարկության սպառողների, մատակարարողների կամ աշխատողների, շահի համար <u>փոխադարձ նպատակ</u>
Կապիտալի վրա հիմնված / ներդրողամետ	Կախված է ընտրված իրավաբանական ձևից (օրենքով թույլատրված)	Անդամների վրա հիմնված, ժողովրդավարական ձևով վերահսկվող, հնարավոր է ըստ արժանիքների խրախուսման համակարգ
Բաժնետերերն օգուտներ են ստանում ձեռնարկության շահույթներից, որոնք սովորաբար բաշխվում են որպես շահութաբաժին (այսինքն՝ դրամական միջոցներով ամենամյա վարձատրություն՝ բաժանորդագրված կապիտալի չափի համամասնությամբ)	Անդամները, որպես այդպիսին, օգուտներ չեն ստանում (նրանք այդպիսին են միայն այն դեպքում, եթե մտնում են շահառուների կատեգորիայի մեջ) Նաև՝ անդամներ չունեցող ոչ առևտրային կազմակերպությունները (հիմնադրամները)	Անդամները/կոոպերատորները օգուտ են ստանում (<i>ակնկալվող</i>) իրենց կոոպերատիվի հետ շահութաբեր գործարքների և/կամ (<i>փաստացի</i>)՝ պատրոնաժային փոխհատուցման / կոոպերատիվի հատույցների (այսինքն՝ այն գումարների, որոնք առաջանում են այս գործարքներից և տրվում՝ սպառման, մատակարարման կամ աշխատանքի համամասնությամբ) միջոցով

3. Հիմնական բացթողումները կոոպերատիվների գործունեության ներկա օրենսդրական կարգավորման գործում

i) Մեր մեկնաբանություններում մենք արդեն անդրադարձել ենք առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվների արհեստական տարբերակման հետևանքով առաջացած երկինաստություններին: Բոլոր կոոպերատիվներն էլ առևտրային են (քանի որ դրանք որևիցե ձեռնարկություն են աշխատեցնում և տարբերվում են ոչ առևտրային

կազմակերպություններից), թեպետ, միևնույն ժամանակ, դրանք շահույթ չեն հետապնդում (բառի բուն իմաստով, դրանք բաժնետերերի կողմից շահագործվող կազմակերպություններ չեն, որոնք շահույթը բաշխում են վերջիններիս ըստ ներդրված կապիտալի), քանի որ փոխադարձ նպատակ են հետապնդում: Ուստի, անհրաժեշտ է փոխել ԶՕ հոդ. 51-ի 3-րդ մասը, ինչպես նաև սպառողական կոոպերատիվների մասին օրենքի հոդ. 1-ի 1-ին մասը, որտեղ կոոպերատիվները համարվում են ոչ առևտրային (շահույթ չհետապնդող) կազմակերպություններ:

ii) ԶՕ հոդ. 117, 1-ին մասը չի հստակեցնում կոոպերատիվի կոնկրետ նպատակը, որը առանցքային նշանակություն ունի կոոպերատիվները իրավաբանական այլ անձանցից տարբերակելու համար: Մասնակիցների կարիքները բավարարումը ընդհանուր տարր է որևէ տեսակի կազմակերպության համար, բացի բարեգործականից: ԶՕ-ում եղած սահմանումից հստակ կերպով չի կարելի բխեցնել կոոպերատիվների ինքնությունը: Պետք է նշում լինի անդամների (որպես սպառող, մատակարարող կամ աշխատող) հետ և անդամների շահերի համար (վերջիններիս հետ պայմանագրերի միջոցով. տես SCE R) որևէ ձեռնարկության շահագործման վերաբերյալ: Սա գաղափար է տալիս ձեռնարկատիրական բնույթի (ի հակադրություն շահերի պաշտպանության) և կոոպերատորների երկակի բնույթի մասին՝ որպես կազմակերպության անդամների և ձեռնարկության անմիջական շահագրգիռ կողմերի (սպառողներ, մատակարարողներ կամ աշխատողներ):

iii) ԶՕ հոդ. 117-ի 1-ին մասը չի նշում կապիտալի փոփոխականության և բաց բնույթի մասին:

iv) ԶՕ հոդ. 117-ի 3-րդ մաս. անհրաժեշտ է նաև շարադրել հակադարձ միտքը, այն է՝ «կոոպերատիվ» անվանումը չի կարող օգտագործվել այն կազմակերպությունների կողմից, որոնք չեն ձևավորվել և շահագործվել որպես կոոպերատիվ՝ օրենքով նախատեսված կարգով:

v) ԶՕ հոդ. 118-ի 3-րդ մաս. պահուստային ֆոնդերը պարտադիր չեն, դրանք անհրաժեշտ են փոփոխական կապիտալ ունեցող կոոպերատիվում (ևս մեկ տարր, որը բացակայում է գործող օրենսդրության մեջ՝ այն փաստի պատճառով, որ կոոպերատիվի բաց բնույթի մասին նույնպես անդրադարձ չկա):

vi) ԶՕ հոդ. 118-ի 4-րդ մաս. վնասները պետք է փակեն անդամները. կարծես թե անդամների սահմանափակ պատասխանատվության մասին խոսք չկա:

vii) ԶՕ հոդ. 118-ի 5-րդ մաս. կոոպերատիվի լուծարումից հետո մնացած ամբողջ գույքի յուրացումը անդամների կողմից անհամատեղելի է կոոպերատիվի՝ շահույթ չհետապնդելու բնույթին, նվազեցնում է կոոպերատիվի սոցիալական գործառույթը և խոչընդոտում կոոպերատիվ շարժման ձևավորմանը:

viii) ԶՕ հոդ. 119-ի 1-ին մաս. պարզ չէ, թե դիտորդ խորհուրդ ինչու կարելի է ստեղծել միայն 50-ից ավելի անդամ ունեցող կոոպերատիվում: Ինքնավերահսկողությունը չի պահանջում, որ միայն կոոպերատիվի անդամները լինեն գործադիր մարմնի անդամներ (մեծամասնությունը բավարար է): Մյուս կողմից, դիտորդ խորհրդում, որը փոքր կոոպերատիվների դեպքում կարող է լինել մեկ անձից բաղկացած մարմին, ավելի լավ կլինի ունենալ կոոպերատիվի անդամ չհանդիսացող պրոֆեսիոնալներ:

ix) ԶՕ հոդ. 120-ի 1-ին մաս. կոոպերատիվից դուրս գալու մասին դրույթի ձևակերպումը չափից ավելի լայն ընդգրկում ունի:

x) ԶՕ հոդ. 121. պարզ չէ՝ արդյոք վերակազմակերպումը ենթադրում է նաև կազմակերպափրավական ձևի փոխակերպում:

4. *Կոոպերատիվների մասին օրենքի ճիշտ կառուցվածքի մասին. ընդհանուր նկատառումներ*

Նախապատվությունը տրվում է առանցքային (նախ և առաջ՝ կոոպերատիվի ինքնությունը ուրվագծող) տարրեր պարունակող ընդհանուր օրենքին, որն ունի կոոպերատիվների բոլոր տեսակների դեպքում կիրառելի լինելու ներուժ: Հայաստանում դա կարելի է անել ԶՕ-ում, թեպետ, այնուամենայնիվ, առանձին օրենքներ կան բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին, որը կարող է մղել դեպի

կոոպերատիվների մասին նույնպես առանձին օրենք ունենալու անհրաժեշտությունը (առավել տեսանելի լինելու, հավասար վերաբերմունքի կամ այլ գործնական և ոչ անպայման գուտ իրավական պատճառներով):

Կոոպերատիվների կոնկրետ տեսակների համար անհրաժեշտ է ունենալ հատուկ օրենքներ (կամ ընդհանուր օրենքում՝ հատուկ բաժիններ), քանի որ առանձնահատկությունները (կոոպերատիվ բանկեր, սոցիալական կոոպերատիվներ, աշխատավորական կոոպերատիվներ) պահանջում են հատուկ կարգավորում (առանց կրկնողության կամ ընդհանուր օրենքից բացառությունների, որոնք արդարացված չեն կոոպերատիվի կոնկրետ տեսակի դեպքում):

Գյուղատնտեսական կոոպերատիվներն ինքնին, կարծես թե արժանի չեն առանձնահատուկ վերաբերմունքի. դրանք պարզապես կոոպերատիվներ են, որոնք գործում են գյուղատնտեսության ոլորտում կամ ձևավորվել են ֆերմերների կողմից: Լավագույն դեպքում, ընդհանուր օրենքում կարելի է ունենալ որոշակի կանոններ, որոնք մտածված են գյուղատնտեսական կոոպերատիվների համար, բայց կարող են ավելի լայն կիրառում ունենալ: Սակայն, քանի ընդհանուր օրենքը դեռ ի վիճակի չէ զարգացնել գյուղատնտեսական կոոպերատիվները և կարճաժամկետ հեռանկարում չի կարող փոփոխվել, ուրեմն գյուղատնտեսական կոոպերատիվների մասին հատուկ օրենք ունենալն արդարացված է (և կարող է հանգեցնել ընդհանուր օրենքի մեջ փոփոխություններ կատարելուն կամ ինքը դառնալ ընդհանուր օրենք):

5. Մեկնաբանություններ գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենքի նախագծի վերաբերյալ

Կասկածից վեր է, որ այս օրինագիծը Հայաստանում կոոպերատիվների ճանաչման և դրանց գործունեության կանոնակարգման տեսանկյունից էական առաջընթաց քայլ է: Թեպետ այն սահմանափակվում է գյուղատնտեսական կոոպերատիվներով, այն կարևոր է առհասարակ կոոպերատիվների համար և կարող է հիմք հանդիսանալ ապագայում կոոպերատիվների մասին ընդհանուր օրենքի համար: Ավելին, այն համապարփակ օրենք է, որը կարգավորում է այն ասպեկտները, որոնք սովորաբար կարգավորվում են առանձին կանոնադրություններով, որն էլ կոոպերատորների համար ենթադրում է ծախսերի (գործարքների) խնայողություն:

Գլխավոր հարցը (որը օրենսդրական այս բարեփոխման հիմնական նպատակը պետք է լինի) կոոպերատիվների օրինական ճանաչումն է որպես՝

1) Մասնավոր իրավունքով օժտված իրավաբանական անձինք, որը նշանակում է՝ պետական իշխանությունից անկախ, քաղաքացիների և/կամ իրավաբանական անձանց կողմից ազատ ընտրությամբ հիմնադրված (ազատ կամարտահայտության գործողություն), անդամների կողմից վերահսկվող: Սա արդեն առկա է գործող օրենքում (*ՔՕ հոդ. 117, մաս 1. «կամավոր միավորում»*, *հոդ. 1. «կամավոր հիմունքներով ձևավորված»*), *բայց հավանաբար անհրաժեշտություն կա օրինագծում նույնպես այն շեշտադրել (հոդ. 3, կետ 5, «ինքնավար»*, *«կամավոր հիմունքներով ձևավորված»*):

2) Ամենակարևորը, որպես բիզնես կազմակերպություններ, այսինքն՝ կազմակերպություններ, որոնք ձեռնարկատիրական գործունեություն են ծավալում, որևիցե ձեռնարկություն շահագործում, ոչ միայն այն ժամանակ, երբ դրանք օգտագործում են անդամների վարձու աշխատանքը կամ նրանց կողմից այլ արտադրանքներ (աշխատավորական և արտադրական կոոպերատիվներ), այլև այն ժամանակ, երբ դրանք անդամներին են տրամադրում ապրանքներ և ծառայություններ (սպառողական կոոպերատիվներ): Սա համատեղելի է ՔՕ հոդ. 2-ի դրույթի հետ («*Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական*

նպատակը գույք օգտագործելուց, սպրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»): քանի որ «շահույթ ստանալը» վերաիմաստավորվում է՝ հաշվի առնելով կոոպերատիվի տարբերությունը. կոոպերատիվի գործունեությունը շահութաբեր է իր անդամների համար՝ ակնկալիքների և փաստացի առումներով, համենայնդեպս՝ ոչ թե ունեցած կապիտալի, այլ՝ կոոպերատիվ ձեռնարկության մեջ կատարած անհատական ներդրման հիման վրա (աշխատանքի, ներդրանքների տրամադրման կամ անհատական սպառման տեսքով):

Կոոպերատիվները շահույթ չհետապնդող կառույցներ չեն, նախ՝ որովհետև դրանք միշտ էլ որևիցե ձեռնարկություն են շահագործում (մինչդեռ շահույթ չհետապնդողները կարող են լինել նվիրատվական/բարեգործական) և երկրորդ՝ որովհետև դրանք կարող են բաշխել շահույթներ (անշուշտ՝ տվյալ գործունեության մեջ անդամների մասնակցության չափով և ոչ թե բաժանորդագրած/ունեցած կապիտալի չափով, որն ամեն դեպքում սահմանափակ է):

3) Վերոնշյալը ենթադրում է, որ կոոպերատիվները (բոլոր տեսակների բոլոր կոոպերատիվները, անկախ այն բանից՝ աշխատավորական են, արտադրական, թե սպառողական) պետք է օրենքով ճանաչվեն որպես առևտրային կազմակերպություններ: Սա համատեղելի է ԶՕ հոդ. 51, մաս 1-ի դրույթին. «Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ», եթե «շահույթ ստանալը» հասկացվում է վերը բացատրված իմաստով:

4) Վերջապես, որպես բիզնես կազմակերպություններ, կոոպերատիվները տարբերվում են բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից, որոնք շահույթ են հետապնդում՝ այն բաժնետերերին բաշխելու նպատակով և կապիտալակետորոն կազմակերպություններ են, մինչդեռ կոոպերատիվները պարտադիր չէ, որ շահույթ հետապնդեն (այսուհանդերձ, դրանք մնում են բիզնես և առևտրային կազմակերպություններ և իրենց գործունեությունն իրենից ներկայացնում է ձեռնարկություն) և կազմակերպվում են ոչ թե կապիտալի, այլ՝ անդամների շուրջ:

5) Տարբերակում պետք է մտզնել նաև հարկային օրենսդրության մեջ: Այն փաստը, որ կոոպերատիվները կորցնում են իրենց կարգավիճակը որպես ոչ առևտրային կազմակերպություններ՝ չպետք է նշանակի, որ կոոպերատիվներին պետք է վերաբերվել նույնկերպ, ինչ՝ առևտրային այլ կազմակերպությունների, քանի որ կոոպերատիվները տարբերվում են վերջիններիցս:

6) Հաշվի առնելով վերոնշյալը, պետք է ձեռնարկել հետևյալ հիմնական քայլերը՝

ա) Վերացնել ԶՕ հոդ. 51-ի 3-րդ մասը. իսկ նույն հոդվածի 2-րդ մասը փոփոխել՝ այդ ցանկում ներառելով կոոպերատիվները, այն է՝ «...տնտեսական ընկերակցությունների, ընկերությունների և կոոպերատիվների ձևով»:

բ) Փոփոխել սպառողական կոոպերատիվների մասին 2003թ. օրենքի հոդ. 1-ի 1-ին մասը, որտեղ խոսվում է սպառողական կոոպերատիվների՝ որպես ոչ առևտրային կազմակերպությունների մասին:

գ) Օրինագծում գործածել բաժնետիրական ընկերությունների մասին 2001թ. օրենքի հոդ.2-ի 1-ին մասում առկա սահմանմանը համանման սահմանում, օրինակ, հետևյալ կերպ. «Կոոպերատիվը բիզնես կազմակերպություն է, առևտրային կազմակերպություն...»:

Անշուշտ եթե մենք ուզում ենք կոոպերատիվներին վերաբերվել որպես **հատուկ տեսակի ընկերությունների**՝ ինչպես աշխարհի բազմաթիվ երկրների օրենսդրության մեջ կա, որի

դեպքում՝ չ) կհատակեցվի բիզնես և առևտրային կազմակերպության իրավական բնույթը, չ) ընկերությունների մասին օրենքը (ՄՊԸ կամ ԲԸ) կարող է կիրառվել նաև կոոպերատիվների նկատմամբ այն պարագաներում, որոնք կոոպերատիվների մասին օրենքով չեն կարգավորվում և անհրաժեշտ է ստուգել դրանց համատեղելիությունը: Սակայն դա պարունակում է ռիսկ, բայց կարող է նպաստել կոոպերատիվների գործունեությանն ու իմիջին՝ որպես բիզնես:

դ) Համաձայն հարկային օրենսգրքի, ձեռնարկվելիք հիմնական միջոցները պետք է լինեն հետևյալները. չ) Հարկվող շահույթ չնախատեսել կոոպերատիվի և դրա անդամների միջև տեղի ունեցող բիզնես գործարքներից («կոոպերատիվ գործարքներ») ստացված եկամուտներից: Որպես կոոպերատիվ փոխհատուցում ստացած գումարների համար կոոպերատիվի անդամները ենթակա են անհատական հարկման: չ) Հարկվող շահույթ չնախատեսել այլ եկամուտներից (ներառյալ՝ ոչ անդամների հետ իրականացված գործունեությունից ստացվածներից) այն դեպքում, եթե դրանք հատկացվում են անբաժանելի ֆոնդերին (նաև՝ կոոպերատիվի լուծարման դեպքում). այս միջոցը կարելի է որպես այլընտրանք կիրառել նաև որպես այդպիսին հատկացված գումարի մի մասի (ասենք, 60/70%-ի) նկատմամբ: չ) Հարկվող շահույթ չնախատեսել այն եկամուտներից (անկախ դրանց աղբյուրից), որոնք հատկացվում են կոոպերատիվ շարժմանը (կոոպերատիվների միություններին)՝ վերջինիս զարգացումը խթանելու նպատակով: չ) նվազեցնել հարկերի դրույքաչափերը (կամ այլ համանման միջոցներ իրականացնել) այն եկամուտներից, որոնք կոոպերատիվի անդամները ստացել են՝ իրենց կոոպերատիվներին որպես փոխառություն տրամադրած գումարից (ֆինանսավորման այս աղբյուրը խթանելու նպատակով: չ) Նվազեցնել հարկերի դրույքաչափերը (կամ այլ համանման միջոցներ իրականացնել) այն եկամուտներից, որոնք կոոպերատիվի անդամները ստացել են որպես ներդրված կապիտալի սահմանափակ տոկոսադրույքի տեսքով (լրացուցիչ փայերի ձեռքբերումը և ներդրող անդամներին խթանելու նպատակով):

7) Ներմուծել կոոպերատիվների առավել ամբողջական օրենսդրական կարգավորում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներքոնշյալ կետերը հիմնված են և ուղղված են միայն օրինագծի սկզբունքային փոփոխություններին, որոնք մենք առաջարկում ենք: Այլ փոփոխություններին և մեկնաբանություններին ծանոթանալու համար խնդրում ենք անդրադառնալ օրինագծի փոփոխված և ծանոթագրված տարբերակին:

1) Սույն օրենքով ամրագրել առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվների տարբերակման սահմանման գերակայությունը Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված համանման սահմանման նկատմամբ: Բոլոր կոոպերատիվները առևտրային են. դրանք շահույթ են ստանում (կարող են ստանալ) և կարող են բաշխել այն, թեպես՝ ոչ այն ձևով, ինչ ընկերությունները, այսինքն՝ պարզևատրելով անդամներին՝ որպես սպառող կամ ապրանք կամ ծառայություն մատակարարող կոոպերատիվի տնտեսական գործունեության մեջ ունեցած անհատական մասնակցության համամասնությամբ:

2) Վերոնշյալը կարելի է իրականացնել՝ պարզապես օրենքում նշելով, որ գյուղատնտեսական կոոպերատիվները բիզնես կազմակերպություններ են, առևտրային կազմակերպություններ: Ակնհայտ է, որ Քաղաքացիական օրենսգիրքը չի խանգարում, որ սա սահմանվի որևէ հատուկ օրենքով:

3) Կոոպերատիվների և ընկերությունների միջև եղած տարբերությունն ընդգծելու համար – որը էական նշանակություն ունի կոոպերատիվների հանդեպ առանձնահատուկ քաղաքականությունը հիմնավորելու համար, մասնավորապես՝ հարկային օրենսդրության տիրույթում – օգտակար կլինի կոոպերատիվներին վերագրել կոնկրետ նպատակ, այն է՝ «փոխադարձ նպատակ»: Այնուհետև հստակեցնել, թե ինչ է նշանակում այս փոխադարձ նպատակը, այսինքն՝ իրականացնել բիզնես գործարքներ կոոպերատիվի անդամների հետ և ի շահ նրանց:

4) Կոոպերատիվները պետք է օրենքով հստակ սահմանվեն առանձին հոդվածով: Սահմանումը պետք է շեշտադրի ոչ միայն փոխադարձ նպատակը, այլև կապիտալի փոփոխականությունը, որը, ի թիվս այլ չափանիշների, էական նշանակություն ունի՝ բաց դռների սկզբունքը արդյունավետ և իրականացման տեսակետից պարզ դարձնելու առումով:

5) Կոոպերատիվը չի կարող ընկալվել այլ կոոպերատիվներից անկախ: Այս օրենքը պետք է օգնի ստեղծել պայմաններ՝ Հայաստանում ավելի մեծ և ավելի ակտիվ կոոպերատիվ շարժում ստեղծելու համար, որն անկախ կերպով կուղղորդեն կոոպերատիվները՝ օգնելով, սատարելով և խթանելով միմյանց:

6) Վերոնշյալը օրենքով կարելի է կարգավորել մի քանի ձևերով. նախ՝ երկրորդային (երրորդային և այլն) կոոպերատիվները ճանաչելով որպես կոոպերատիվների միջև տնտեսական ինտեգրացման ձև. երկրորդ, որ թերևս ավելի կարևոր է՝ ճանաչելով այն հնարավորությունը, որ որոշակի թվով կոոպերատիվներ կարող են ստեղծել կոոպերատիվների միություններ՝ կոոպերատիվ շարժումը զարգացնելու և խթանելու նպատակով: Այս ուղղությամբ նշանակալից միջոց է՝ օրենքում նախատեսել դրույթ միությունների կողմից կառավարվող ֆոնդի վերաբերյալ, որը նպատակաուղղված է կոոպերատիվ շարժման մի քանի ձևերով զարգացմանը: Այդ ֆոնդը պետք է ձևավորվի անդամ կոոպերատիվների կողմից արվող ներդրումներից, սակայն չպետք է բացառել նաև պետական աջակցությունը: Մեկ այլ միջոց է՝ կոոպերատիվի համար հնարավորություն ստեղծել, որ այն դառնա որևիցե ընկերության բաժնետեր (ընկերության սեփականատեր կոոպերատիվի համար այդ ընկերությունը կարող է դառնալ արդյունավետ գործիք, օրինակ՝ իրենց գյուղատնտեսական մթերքի իրացման համար):

7) Կոոպերատիվի սահմանումից բացի, որը օրենքում առանձնացված պիտի լինի այլ սահմանումներից, օրենքը նաև պետք է պարունակի այնպիսի էական հասկացությունների սահմանումների ցանկ, ինչպիսիք են՝ «կոոպերատիվի գործարքներ»՝ ի հակադրություն «ոչ անդամների հետ կոոպերատիվի գործարքների», «կոոպերատիվի ավելցուկ» ի հակադրություն «կոոպերատիվի շահույթի», «կոոպերատիվի փոխհատուցում» ի հակադրություն «կապիտալի հատույցի»: Սա առաջնային կարևորություն ունի, քանի որ կոոպերատիվների առանձնահատկությունը, որը կախված է նշված հասկացություններից, հաճախ հստակ չի լինում, նույնիսկ հարկային օրենսդրի համար:

8) Նպատակահարմար կլիներ օրինագծում ներմուծել ներդրող (ոչ օգտագործող) անդամների հասկացությունը. խոսքն այն անդամների մասին է, ովքեր չեն օգտվում կոոպերատիվի մատուցած ծառայություններից (այսինքն՝ նրանք բառիս բուն իմաստով կոոպերատորներ չեն), այլ միայն կապիտալ են ապահովում՝ ակնկալելով հատույց այդ կապիտալից: Սակայն նպատակահարմար է սահմանափակում դնել կապիտալի հատույցի վրա, որը, այուամենայնիվ, կարող է լինել ավելի բարձր, քան կոոպերատորներին որպես պարգևավճար տրվող գումարը: Նրանց լիազորությունները պետք է սահմանափակել նաև ընդհանուր ժողովում՝ նշելով, որ ընդհանուր ժողովի յուրաքանչյուր գումարման ժամանակ նրանք չեն կարող ունենալ ավելին, քան ձայների ընդհանուր քանակի որոշակի տոկոսը: Սա կապահովի, որ կոոպերատիվները մնան օգտագործողի կողմից վերահսկվող կազմակերպություններ՝ համաձայն կոոպերատիվների սկզբունքների:

9) Ինչ վերաբերում է կառավարմանը, մեկ անդամ – մեկ ձայն սկզբունքի ներքո կարելի է փոքրիկ բացառություն նախատեսել՝ ավելի փոքր ֆերմերների կոոպերատիվում ավելի մեծ ֆերմերների մասնակցությունը խրախուսելու և առհասարակ՝ կոոպերատիվի ոչ միատարր անդամակցությունը արդյունավետ կարգավորելու նպատակով, որը կարող է գործառնական բնույթի լուրջ դժվարություններ հարուցել (շահերի ներքին բախման պատճառով) և նույնիսկ հանգեցնել կոոպերատիվի լուծարմանը: Եվս մեկ ձևափոխություն վերաբերում է վարչական մարմնի վերաբերյալ դրույթին, այն է՝ վարչական մարմնի անդամների առնվազն մեծամասնությունը պետք է լինեն կոոպերատիվների անդամներ՝ կոոպերատիվի սեփականատիրության և դրա վերահսկողության միջև ամուր կապ ապահովելու նպատակով:

10) Ինչ վերաբերում է կոոպերատիվի ֆինանսական կառուցվածքին, հիմնական շտկումները պետք է անել հետևյալ դրույթներում. կոնկրետ սահմանափակում այն տոկոսների վրա, որոնք կարող են վճարվել բաժանորդագրված կապիտալի համար. կոոպերատիվի ավելցուկի հնարավոր, պարտադիր և կամավոր հատկացումների ցանկ. դրույթ այն մասին, որ կոոպերատիվի շահույթը, ի տարբերություն կոոպերատիվի ավելցուկի, պետք է հատկացնել պահուստային ֆոնդին. դրույթ այն մասին, որ որպես կոոպերատիվի փոխհատուցում բաշխվող կամ որոշակի այլ ձևով հատկացվող կոոպերատիվի ավելցուկը ազատվում է հարկումից. դրույթ այն մասին, որ կոոպերատիվի լուծարման դեպքում դրա անբաժանելի ֆոնդերը պետք է հատկացվեն միությունների կողմից ղեկավարվող կոոպերատիվների զարգացման ֆոնդերին: